ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՀՀ ԱՆ – ԲԸԱՀԾՁԲ-15/10

ք.Երևան «11» փետրվարի 2015թ

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, այսուհետև՝ «Պատվիրատու», ի դեմս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, այսուհետև՝ «Կատարող», ի դեմս տնօրենի ժ/պ Արամ Գահնապետյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել փորձաքննությունների կատարման ծառայություններ՝ դատական փորձաքննությունների կատարման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով և հավելված N1-ում սահմանված չափաքանակներով ու գներով (տեխնիկական հատկանիշներով), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել փորձագետի կողմից՝ սույն պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարված եզրակացությունն ու վճարել փորձաքննության կատարման ծառայությունների գինը:

1.2. Յուրաքանչյուր կոնկրետ փորձաքննության կատարումը հանձնարարում և փորձաքննության կատարման արդյունքում կազմված եզրակացությունն ընդունում է տվյալ փորձաքննության անցկացումը նախաձեռնողը՝ դատարանը կամ քրեական հետապնդման մարմինը (դատախազը, քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը), որոնք ի պաշտոնե հանդիսանում են Պատվիրատուի ներկայացուցիչը:

1.3. Յուրաքանչյուր կոնկրետ փորձաքննության բովանդակությունը որոշվում է փորձաքննությունը նախաձեռնողի՝ տվյալ փորձաքննությունը նշանակելու մասին որոշմամբ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարված Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Միակողմանի լուծել սույն Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում տեխնիկական հատկանիշների պահանջներին և (կամ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը չի կարող կատարվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

2.1.3 Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և տեխնիկական հատկանիշների պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 3.2 և 3.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը.

2.1.4 Մինչև Ծառայության արդյունքը (Կատարողի կողմից) Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Կատարողին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Կատարողին:

2.1.5 Միակողմանի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

2.1.6 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում տեխնիկական հատկանիշների պահանջներին

ա) մատուցված ծառայության արդյունքը անորակ է և այն չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում

բ) բազմիցս խախտվել են ծառայության մատուցման ժամկետները:

2.1.7 Կողմերի պայմանագրի կատարման պայման է հանդիսանում ՀՀ կառավարության 05.02.2015թ N 75-Ն որոշումն ուժի մեջ մտնելը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության մատուցման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին.

2.2.2 Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 3.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կատարված ծառայության արդյունքը:

2.3.2 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ ներկայացնելով հրաժարվելու համար հիմք հանդիսացող պատճառներն ու հիմնավորումները և այդ մասին առնվազն 30 աշխատանքային օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին և հատուցելով հրաժարման արդյունքում Պատվիրատուին պատճառված վնասները:

2.3.3 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 3.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ապահովել Ծառայության մատուցումը:

2.4.2 Պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները.

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 3.2 և 3.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 3.2 և 3.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Կատարողը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով նախատեսված կարգով և պահանջներին համապատասխան ծառայության մատուցման համար:

3.2 Կատարողի կողմից սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքերում պայմանագրի լուծման, 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունը չընդունվելու, Ծառայությունը չմատուցելու յուրաքանչյուր ուշացած օրվա համար Կատարողի նկատմամբ հաշվարկվում է տույժ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության արժեքի 0,05%-ի չափով:

3.3 Սույն պայմանագրի 3.2 և 3.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

3.4 Կատարողի կողմից տեխնիկական հատկանիշների պահանջներին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի գնի 0,05%-ի չափով:

3.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

3.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.7 Տույժերի և /կամ/ տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

3.8 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով.

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 145 632 400 (մեկ հարյուր քառասունհինգ միլիոն վեց հարյուր երեսուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

4.2 Ծառայությունների մատուցման գինը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարներ, ինչպես նաև Կատարողի կողմից սույն պայմանագրով իրականացվող փորձաքննությունների համար իրականացված ծախսերը: Փորձաքննությունների, ըստ տեսակների, կատարման ծառայությունների գինը որոշվում է ըստ սույն պայմանագրի հավելված N 1-ի միավոր գների:

Ծառայությունը մատուցվում է 0 (զրո) տոկոս շահույթով:

4.3 Պատվիրատուն պարտավորվում է վճարել կատարված աշխատանքների դիմաց հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու օրվանից /հիմք՝ հաշիվ-ապրանքագիր/ հինգ բանկային օրվա ընթացքում:

4.4 Պատվիրատուն կատարված Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը համարվող N2 հավելվածով նախատեսված կարգով:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Կատարողը ոչ ուշ, քան յուրաքանչյուր ամսվան հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դեկտեմբեր ամսվա մատուցված ծառայության դիմաց՝ մինչև 30.12.15թ. ներառյալ, Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից տվյալ ամսում կատարված Ծառայության մասին ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

5.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.3 Կատարողի կատարած Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

6. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6.1 Կատարողը պայմանագրով նախատեսված աշխատանքներն իրականացնում է ք.Երևան, Արշակունյաց 23 հասցեում գտնվող իրեն պատկանող մասնաշենքում:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին

կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների՝ ըստ գործող կարգի ընդունված ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1.1 Պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 30.12.15թ. ներառյալ: Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2015 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա: Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցումով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.2 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.3 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Հավելվածներ N 1 և N 2-ը՝ ընդամենը բաղկացած 3 էջից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու՝	Կատարող՝
«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ	«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
ք.Երևան, Հալաբյան 41ա, հեռ.՝ 380250	ք.Երևան, Արշակունյաց 23, հեռ.՝ 585950
ՀՎՀՀ 02506264	ՀՎՀՀ 02512069
Բանկային վավերապայմանները՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն Հ/Հ 900011194181	Բանկային վավերապայմանները՝ ք.Երևան, 375010, Վազգեն Սարգսյան փող., 26, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, Հ/Հ 1930000762190100
Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Գևորգյան	Տնօրենի ժ/պ՝ Ա. Գահնապետյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված № 1
№ ՀՀ ԱՆ – ԲԸԱՀԾՁԲ/15/10 պայմանագրի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԵՍԱԿԻ ՔԱՆԱԿՆ ՈՒ ՄԻԱՎՈՐԻ ԳԻՆԸ

Փորձաքննության տեսակը	Փորձագիտական աշխատանքի նորմատիվային ժամածախսը, (ժամ) *	Փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա արժեքը, (դրամ)**	Միավորի նախահաշվային արժեքը (դրամ)	Քանակը (հատ) ***	Ընդամենը նախահաշվային արժեքը (հազ. դրամ)
Ձեռագրաբանական	45	560	25200	248	6249,6
Փաստաթղթաբանական, այդ թվում՝	60	560	33600	179	6014,4
- փաստաթղթի պատրաստման եղանակի և վավերապայմանների	60	560	33600	138	4636,8
- փաստաթղթի նյութի	60	560	33600	41	1377,6
Հետքաբանական, այդ թվում՝	45	560	25200	472	11894,4
- մարդու կողմից թողնված հետքերի	45	560	25200	40	1008
- առարկաների, գործիքների հետքերի	45	560	25200	205	5166
- տրանսպորտային միջոցների հետքերի	45	560	25200	200	5040
- սառը զենքի	45	560	25200	27	680,4
Ֆոտոտեխնիկական	90	560	50400	20	1008
Դիմանկարային	90	560	50400	60	3024
Ձգաբանական, այդ թվում՝	60	560	33600	386	12969,6
- հրազենի և զինամթերքի	60	560	33600	206	6921,6
- կրակոցի հետքերի և արգասիքների	60	560	33600	180	6048
Պայթյունատեխնիկական, այդ թվում՝	90	560	50400	22	1108,8
- պայթուցիկ սարքավորումների և զինամթերքի	90	560	50400	12	604,8
- պայթյունի հետքերի և արգասիքների	90	560	50400	10	504
Նյութագիտական, այդ թվում՝	60	560	33600	460	15456
- լաքաներկերի և ծածկույթների	60	560	33600	146	4905,6
- նավթամթերքների և քսայուղերի	60	560	33600	51	1713,6
- սպիրտ պարունակող հեղուկների	60	560	33600	58	1948,8
- ապակու, ապակենման նյութերի, սիլիկատային նյութերի	60	560	33600	4	134,4
- միներալների, բնական ու թանկարժեք քարերի	60	560	33600	56	1881,6
-պլաստմասսաների, ռետինի և այլ պոլիմերային նյութերի	60	560	33600	12	403,2
-մետաղների և համաձուլվածքների	60	560	33600	73	2452,8
-այլ նյութերի	60	560	33600	60	2016
Կենսաբանական, այդ թվում՝	60	560	33600	422	14179,2
-բուսական ծագման օբյեկտների	60	560	33600	140	4704
-կենդանական ծագման օբյեկտների	60	560	33600	8	268,8
-թմրամիջոցների և հոգեմետ դեղամիջոցների	60	560	33600	202	6787,2
-մանրաթելերի ու գործվածքների	60	560	33600	54	1814,4
-հողագիտական	60	560	33600	18	604,8
Մնդային	60	560	33600	2	67,2
Տեսաձայնագրառման, այդ թվում՝	120	560	67200	164	11020,8
-ձայնի և հնչած խոսքի	120	560	67200	63	4233,6

...գրվածքի ձայնային միջավայրի, ...երի, միջոցների, նյութի և ...ի	120	560	67200	62	4166,4
...սագրվածքի պատկերի, ...անների, միջոցների, նյութի և ...քերի	120	560	67200	39	2620,8
...դեհատեխնիկական, այդ թվում՝	90	560	50400	171	8618,4
- հրդեհատեխնիկական	90	560	50400	143	7207,2
- էլեկտրատեխնիկական	90	560	50400	28	1411,2
Շինարարատեխնիկական, այդ թվում՝	60	560	33600	140	4704
-շինարարատեխնիկական	60	560	33600	126	4233,6
-անշարժ գույքի գնահատման	60	560	33600	14	470,4
Ճանապարհատրանսպորտային պատահարների հանգամանքների	30	560	16800	922	15482,8
Տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի	90	560	50400	142	7156,8
Տրանսպորտային հետքաբանական	90	560	50400	185	9324
Տնտեսագիտական, այդ թվում՝	180	560	100800	84	8467,2
-հաշվապահական	180	560	100800	77	7761,6
-ֆինանսատնտեսագիտական	180	560	100800	7	705,6
Ապրանքագիտական, այդ թվում՝	30	560	16800	529	8887,2
-ապրանքի գնահատման	30	560	16800	264	4435,2
-գույքային վնասի չափի որոշման	30	560	16800	265	4452
Ընդամենը				4608	145632,4

*-Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2006 թվականի փետրվարի 2-ի N 79-Ն որոշմամբ հաստատել է յուրաքանչյուր տեսակի փորձաքննության ծառայության մատուցման նորմատիվային ժամածախսերը

**-Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 75-Ն որոշման 2-րդ կետով սահմանվել է փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա արժեքը՝ 560 դրամ:

*** - Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 75-Ն որոշման 4-րդ կետով՝ ընդհանուր գումարի սահմաններում հնարավոր է փորձաքննությունների առանձին տեսակների քանակների փոփոխություն

Պատվիրատու՝

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ

ք.Երևան, Հալաբյան 41ա, հեռ.՝ 380250

ՀՎՀՀ 02506264

Բանկային վավերապայմանները՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն

Հ/Հ 900011194181

Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Գևորգյան

Կ.Տ

Կատարող՝

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

ք.Երևան, Արշակունյաց 23, հեռ.՝ 585950

ՀՎՀՀ 02512069

Բանկային վավերապայմանները՝

ք.Երևան, 375010, Վազգեն Սարգսյան փող., 26, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ,

Հ/Հ 1930000762190100

Տնօրենի ժ/պ՝ Ա. Գահնապետյան

Կ.Տ.

Հավելված N 2

№ ՀՀ ԱՆ – ԲԸԱՀԾՁԲ-15/10 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

Ծառայության անվանումը	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Պետական պատվերի շրջանակում կատարվող փորձաքննությունների ծառայությունների մատուցում	19417.7	29126.5	41262.5	53398.6	65534.6	77670.6	89806.7	101942.7	116505.9	131069.2	145632.4	145632.4

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով.

Պատվիրատու՝

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ

ք.Երևան, Հալաբյան 41ա, հեռ.՝ 380250

ՀՎՀՀ 02506264

Բանկային վավերապայմանները՝
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն
Հ/Հ 900011194181

Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Գևորգյան

Կ.Տ.

Կատարող՝

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

ք.Երևան, Արշակունյաց 23, հեռ.՝ 585950

ՀՎՀՀ 02512069

Բանկային վավերապայմանները՝

ք.Երևան, 375010, Վազգեն Սարգսյան փող., 26, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ,

Հ/Հ 1930000762190100

Տնօրենի ժ/պ՝ Ա. Գահնապետյան

Կ.Տ.